ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

սեպտեմբերի 2021 թվականի №Ա
քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԽՈՒԴՅԱԿՈՎԻ 2Ա/22 ՀԱՍՑԵԻ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով՝

ա) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2021 թվականի սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով) ներկայացված №01/106.3.2/07393-2021 գրությունը՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդու Հովհաննես Թումանյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ Դիմող անձ) «Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա» հիմնադրամի (ներկայիս՝ «Հայաստանում եվրոպական քոլեջ» հիմնադրամ, այսուհետ՝ Հիմնադրամ) կողմից ժամանակավոր, անհատույց օգտագործման տրամադրված՝ Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Խուդյակովի 2ա/22 հասցեի սպառման համակարգը (այսուհետ՝ Սպառման համակարգ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) էլեկտրական ցանցին միացնելու նպատակով միջնորդություն ներկայացնելու վերաբերյալ,

բ) որ Սպառման համակարգն Ընկերության էլեկտրական ցանցին միացվում է Դիմող անձի դիմումի համաձայն՝ որպես առանձին սպառման համակարգ, և լրացուցիչ ծախսեր չի առաջացնում,

գ) Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի №851Ա որոշումը, որով Հիմնադրամին, որպես գույքային ներդրում, հանձնվել է Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Խուդյակովի 2ա/22 հասցեի՝ 1125.7 քառակուսի մետր մակերեսով մասնաշենքը և դրա զբաղեցրած՝ օգտագործման ու սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքը,

դ) Դիմող անձի և Հիմնադրամի միջև 2021 թվականի օգոստոսի 23-ին կնքած՝ ոչ բնակելի տարածքի անհատույց օգտագործման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր), որի համաձայն՝ Հիմնադրամը պարտավորվում է Դիմող անձի ժամանակավոր, անհատույց օգտագործմանը հանձնել Լոռու մարզի Ալավերդի քաղաքի Խուդյակովի 2ա/22 հասցեի ոչ բնակելի տարածքը՝ ուսումնական գործունեություն իրականացնելու նպատակով,

ե) Ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի №Ե-539-21, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի №01 /106,3,2/07596-2021 և Դիմող անձի 2021 թվականի սեպտեմբերի 17-ի №49 գրությունները, որոնց համաձայն՝ վերջիններս չեն առարկում Սպառման համակարգն էլեկտրական ցանցին սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով միացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշմամբ հաստատված՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8 կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել, որ Սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացվում է Կանոնների 14.4 կետով սահմանված կարգով՝ տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով՝ Կանոնների 13.2 կետի 5-րդ ենթակետով պահանջվող փաստաթղթի փոխարեն հիմք ընդունելով Պայմանագիրը:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ չի թույլատրվում Դիմող անձից պահանջել կատարել վճարումներ, տրամադրել հատուցում, ներկայացնել տեղեկատվություն և փաստաթղթեր կամ նրան ծանրաբեռնել պարտավորություններով, եթե դրանք սահմանված չեն Կանոններով, այլ նորմատիվ իրավական ակտերով, սույն որոշմամբ կամ էլեկտրամատակարարման պայմանագրով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Դիմող անձին և Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
սեպտեմբերի 2021թ.